**ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ԳՀԾՁԲ-21-20/2-2**

ք. Երևան 15.02.2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչության պետ Ն. Յոլյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Սլացք» ՓԲԸ-ն՝ ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Ա. Ահարոնյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ»

բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 24 000 000 (քսանչորս միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ **ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ**, որտեղ՝ ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ծառայությունների դիմաց վճարվող գումարն է.

**ՎԳ**-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

**ՎԳ**-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների գինն է՝ **43 900 000** ՀՀ դրամ.

**ՄԳ**-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է՝ **43 900 000** ՀՀ դրամ.

**ՆԳ**-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է՝ **43 993 650** ՀՀ դրամ.

**ՄԳ/ՆԳ –** բանաձևով սահմանված գործակից՝ **0,997.**

**Ծ**-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է /**հավելված 1**/.

**Ք**-ն մատուցված ծառայության քանակն է:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

---

*[21] Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **18** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.14 Սույն պայմանագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ինժեներական զորքերի վարչությունը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈՒԼՉՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Սլագ» ՓԲԸ
ՀՀ, ք. Վանաձոր, Թևոսյան 3
«Ակբա- Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ Լ/Մ
Հ/Հ 220053333435000
ՀՎՀՀ 06901582
Գլխավոր տնօրեն

Ա. ԱՀԱՐՈՆՅԱՆ

*Հավելված N 1*
*N ԳՀԾՁԲ-21-20/2-2 պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Գնման առարկայի | | |
|---|---|---|
| **հ/հ** | **անվանումը** | **տեխնիկական բնութագիրը** |
| 1 | **Ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություններ** //Հատուկ ինժեներական տեխնիկայի վերանորոգում /Ավտոուղեհարթիչ ԴԶ-122Բ-1 տեխնիկաների վերանորոգման ծառայությունյուններ// | Վերանորոգումն ըստ ավտոուղեհարթիչ ԴԶ-122Բ-1 արտադրող ձեռնարկության տեխնիկական բնութագրի |

**Ծանոթություն՝**

1. Հիմնական նորոգում անցած շարժիչները և փոխանցման տուփերը պետք է կապարակնքվեն ընկերության կողմից և տրվեն 500մ/ժ կամ 1 տարի երաշխիքային շահագործման ժամկետներ (որը գործում է մինչև պայմաններից մեկի ավարտը):
2. Հիմնական նորոգում անցած ագրեգատներին տրված երաշխիքային ժամկետները գործելու են վերանորոգման ընկերության կողմից հաստատված երաշխիքային գրքույկներում նշված ցուցանիշների պահպանման դեպքում,
3. Փոխարինված ագրեգատները, պահեստամասերը (բացառությամբ արագամաշ, ցածրարժեք պահեստամասերի) պետք է հանձնվեն ՀՀ ՊՆ 13516զ/մ (ք.Էջմիածին Իսիկ-Մուլինո 7):
4. Վերանորոգող ընկերությանը հանձնված յուրաքանչյուր տեխնիկայի հիմնական նորոգումը (եթե կոնստրուկտիվ փոփոխություններ չեն լինելու) պետք է կատարվի (հանձնման օրվանից սկսած) ոչ ուշ քան 30 օրվա ընթացքում:
5. Վերանորոգման ծառայություններն իրականացնելիս պետք է օգտագործվեն նոր, չօգտագործված պահեստամասեր, որոնք ըստ հնարավորության կարող են տրամադրվել ՀՀ ԶՈՒ ԻԶ վարչության կողմից:
6. Վերանորոգման ենթակա տեխնիկան տրամադրվում է ՀՀ ԶՈՒ ԻԶՎ-ի կողմից (տեղափոխումը ՀՀ տարածքում մինչև ընկերություն):

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Գնման առարկայի | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **հ/հ** | **անվանումը** | **չ/մ** | **քանակը** | **առավելագույն գինը /գումարը/ (ՀՀ դրամ)** | Ծառայության մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված ժամկետում՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ը պարբերության պահանջները: |
| 1 | **Ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություններ** //Հատուկ ինժեներական տեխնիկայի վերանորոգում /Ավտոուղեհարթիչ ԴԶ-122Բ-1 տեխնիկաների վերանորոգման ծառայությունյուններ// | դրամ | 1 | 24000000 | |

**Ծանոթություն՝** բացվածքը ըստ կից **հավելված 1-ի:**

**Հավելված N 2**
**N ԳՀԾՁԲ-21-20/2-2 պայմանագրի**

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Գնման առարկայի | | | |
|---|---|---|---|
| **հ/հ** | **անվանումը** | **CPV կոդը** | Ծառայության վճարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված ժամկետում |
| 1 | **Ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություններ** //Հատուկ ինժեներական տեխնիկայի վերանորոգում /Ավտոուղեհարթիչ ԴԶ-122Բ-1 տեխնիկաների վերանորոգման ծառայությունյուններ// | 50531100/503 | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈՒԼՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Նաիր» ՓԲԸ գլխավոր տնօրեն

Ա. ԱԺԱՐՈՒՅԱՆ

## Հավելված 1

| | | | |
|---|---|---|---|
| | **Ավտոուղեհարթիչ ԴԶ-122Բ-1** | | |
| 1 | Շարժիչի հանում | հատ | 50000 |
| 2 | Շարժիչի տեղադրում | հատ | 50000 |
| 3 | Շարժիչի քանդում և արատավորում | հատ | 100000 |
| 4 | Շարժիչի բլոկի ստենդային ստուգում | հատ | 20000 |
| 5 | Շարժիչի բլոկի ներտաշում | հատ | 40000 |
| 6 | Շարժիչի բլոկի վերանորոգում | հատ | 35000 |
| 7 | Շարժիչի բլոկի մաքրում և ներկում | հատ | 22000 |
| 8 | Շարժիչի բլոկի փոխարինում | հատ | 8000 |
| 9 | Շարժիչի /առանց բլոկի/ մասերի մաքրում | հատ | 15000 |
| 10 | Շարժիչի հավաքում | հատ | 60000 |
| 11 | Շարժիչի ռեզինոտեխնիկական պատրաստվածքների փոխարինում | հատ | 4000 |
| 12 | Շարժիչի 1 կոմպլեկտ գլանի, մխոցի, մխոցամատի, մխոցային օղերի փոխարինում /շարժիչն հանված/ | հատ | 5000 |
| 13 | Շարժիչի շարժաթևի փոխարինում /շարժիչն հանված/ | հատ | 2000 |
| 14 | Շարժիչի շարժաթևի ականոցի փոխարինում /շարժիչն հանված/ | հատ | 6000 |
| 15 | Շարժիչի յուղի պոմպի ստենդավորում | հատ | 9000 |
| 16 | Շարժիչի յուղի պոմպի վերանորոգում | հատ | 10000 |
| 17 | Շարժիչի գլխիկի կափարիչի ապամոնտաժում և մոնտաժում | հատ | 800 |
| 18 | Շարժիչի գլխիկի կափարիչի ամրացման հեղյուսի փոխարինում | հատ | 200 |
| 19 | Շարժիչի գլխիկի փոխարինում | հատ | 5000 |
| 20 | Շարժիչի գլխիկի վերանորոգում | հատ | 40000 |
| 21 | Շարժիչի գլխիկի արտածման փականի փոխարինում | հատ | 700 |
| 22 | Շարժիչի գլխիկի ներածման փականի փոխարինում | հատ | 700 |
| 23 | Շարժիչի գլխիկի փականի լծակի փոխարինում | հատ | 700 |
| 24 | Շարժիչի գլխիկի փականի արտաքին զսպանի փոխարինում | հատ | 200 |
| 25 | Շարժիչի գլխիկի փականի ներքին զսպանի փոխարինում | հատ | 200 |
| 26 | Շարժիչի գլխիկի ամրացման մանեկի փոխարինում | հատ | 200 |
| 27 | Շարժիչի գլխիկի ամրացման գամասեղի փոխարինում | հատ | 1000 |
| 28 | Շարժիչի բաշխիչ լիսեռի փոխարինում | հատ | 6000 |
| 29 | Շարժիչի ծնկաձև լիսեռի ստուգում | հատ | 8000 |
| 30 | Շարժիչի ծնկաձև լիսեռի ողորկում | հատ | 10000 |
| 31 | Շարժիչի ծնկաձև լիսեռի հղկում | հատ | 20000 |
| 32 | Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում | հատ | 2000 |
| 33 | Շարժիչի ներթողման կոլեկտորի փոխարինում | հատ | 2500 |
| 34 | Շարժիչի ներածող կոլեկտորի միացման խողովակաուստի փոխարինում | հատ | 2000 |
| 35 | Թափանիվի փոխարինում | հատ | 6000 |
| 36 | Թափանիվի ատամնավոր օղագոտու փոխարինում | հատ | 4000 |
| 37 | Շարժիչի թափանիվի քարտերի փոխարինում | հատ | 5000 |
| 38 | Շարժիչի քարտերի փոխարինում | հատ | 5000 |
| 39 | Շարժիչի յուղի զտիչի փոխարինում | հատ | 500 |
| 40 | Յուղի ռադիատորի փոխարինում | հատ | 7000 |
| 41 | Շարժիչի յուղի մակարդակի ցուցիչի փոխարինում | հատ | 200 |
| 42 | Շարժիչի փոկի փոխարինում | հատ | 500 |
| 43 | Շարժիչի փորձարկման ծառայություն | հատ | 30000 |
| 44 | Վառելիքի բաքի հանում և տեղադրում | հատ | 8000 |
| 45 | Վառելիքի բաքի վերանորոգում | հատ | 15000 |
| 46 | Վառելիքի բաքի ամրացման ամրակապի փոխարինում | հատ | 1000 |
| 47 | Վառելիքի բաքի մաքրում և ներկում | հատ | 5000 |
| 48 | Վառելիքի խողովակաշարերի փոխարինում | հատ | 12000 |
| 49 | Վառելիքի առբերման խողովակի փոխարինում | հատ | 700 |

| | | | |
|---|---|---|---|
| 50 | Վառելիքի հեռացման խողովակի փոխարինում | հատ | 700 |
| 51 | Վառելիքի բարձր ճնշման խողովակի փոխարինում | հատ | 700 |
| 52 | Ցամաքուրդային խողովակի փոխարինում | հատ | 700 |
| 53 | Տարաթողման փականի փոխարինում | հատ | 300 |
| 54 | Վերջնամաքրման վառելիքի զտիչի փոխարինում | հատ | 500 |
| 55 | Վերջնամաքրման վառելիքի զտիչի թասակի փոխարինում | հատ | 300 |
| 56 | Վերջնամաքրման վառելիքի զտիչի էլեմենտի փոխարինում | հատ | 500 |
| 57 | Ցածր ճնշման վառելիքի պոմպի վերանորոգում | հատ | 1000 |
| 58 | Ցածր ճնշման վառելիքի պոմպի փոխարինում | հատ | 1000 |
| 59 | ԲՃՎՄ-ի հանում և տեղադրում | հատ | 8000 |
| 60 | ԲՃՎՄ-ի ստենդային ստուգում, կարգավորում | հատ | 15000 |
| 61 | ԲՃՎՄ-ի քանդում, հանգույցների, դետալների մաքրում, լվացում և սեղմված օդով փչում և հավաքում | հատ | 8000 |
| 62 | ԲՃՎՄ-ի ընթացիկ նորոգում | հատ | 12000 |
| 63 | ԲՃՎՄ-ի հիմնական նորոգում | հատ | 20000 |
| 64 | Բոցամուղի  ստենդային ստուգում և կարգավորում | հատ | 1500 |
| 65 | Բոցամուղի փոխարինում | հատ | 1000 |
| 66 | Բոցամուղի փոշարարի փոխարինում | հատ | 1000 |
| 67 | Օդի ընդունման խողովակի փոխարինում | հատ | 2000 |
| 68 | Օդատար խողովակի փոխարինում | հատ | 2000 |
| 69 | Օդի զտիչի էլեմենտի փոխարինում | հատ | 500 |
| 70 | Խլացուցիչի հանում և տեղադրում | հատ | 4500 |
| 71 | Խլացուցիչի վերանորոգում | հատ | 4000 |
| 72 | Խլացուցիչի ընդունման խողովակի փոխարինում | հատ | 1500 |
| 73 | Խլացուցիչի խամուտի փոխարինում | հատ | 700 |
| 74 | Խլացուցիչի մաքրման և ներկման ծառայություն | հատ | 3000 |
| 75 | Ռադիատորի հանում և տեղադրում | հատ | 12000 |
| 76 | Ռադիատորի վերանորոգման ծառայություն | հատ | 15000 |
| 77 | Ռադիատորի կախոցի բարձիկի փոխարինում | հատ | 700 |
| 78 | Ռադիատորի կախոցի շրջանակի հանում և տեղադրում | հատ | 6000 |
| 79 | Ռադիատորի կախոցի շրջանակի վերանորոգում | հատ | 5000 |
| 80 | Ռադիատորի ճկափողի փոխարինում | հատ | 300 |
| 81 | Հեղուկաթափ ծորակի փոխարինում | հատ | 200 |
| 82 | Շարժիչի ջրի պոմպի վերանորոգման ծառայություն | հատ | 13000 |
| 83 | Շարժիչի ջրի պոմպի փոխարինում | հատ | 3500 |
| 84 | Օդափոխիչի թևանիվի փոխարինում | հատ | 2500 |
| 85 | Հիդրոկցորդիչի հանման և տեղադրման ծառայություն | հատ | 15000 |
| 86 | Հիդրոմեխանիկ փոխանցիչի հանման և տեղադրման ծառայություն | հատ | 20000 |
| 87 | Հիդրոմեխանիկ փոխանցիչի քանդում և արատավորում | հատ | 12000 |
| 88 | Հիդրոմեխանիկ փոխանցիչի բաղկացուցիչ հանգույցների լվացում | հատ | 8000 |
| 89 | Հիդրոմեխանիկ փոխանցիչի հավաքում | հատ | 15000 |
| 90 | Հիդրոմեխանիկ փոխանցիչի ռեզինոտեխնիկական կտրվածքների փոխարինում | հատ | 4000 |
| 91 | Հիդրոմեխանիկ փոխանցիչի մաքրում և ներկում | հատ | 8000 |
| 92 | Գեներատորի հանում և տեղադրում | հատ | 2500 |
| 93 | Գեներատորի քանդում, արատավորում, սպասարկում և հավաքում | հատ | 3500 |
| 94 | Մեկնարկիչի հանում և տեղադրում | հատ | 3500 |
| 95 | Մեկնարկիչի քանդում, արատավորում, սպասարկում և հավաքում | հատ | 3000 |

| | | | |
|---|---|---|---|
| 96 | Լարման կարգավորիչի փոխարինում | հատ | 600 |
| 97 | Լարման կարգավորման ռելեյի փոխարինում | հատ | 600 |
| 98 | Յուղի ճնշման տվիչի փոխարինում | հատ | 500 |
| 99 | Ջերմաստիճանի ազդանշանի տվիչի փոխարինում | հատ | 500 |
| 100 | Վառելիքի մակարդակի տվիչի փոխարինում | հատ | 500 |
| 101 | Առջևի լապտերի փոխարինում | հատ | 700 |
| 102 | Ներքին լուսավորման լուսամփոփի փոխարինում | հատ | 700 |
| 103 | Հետևի լապտերի փոխարինում | հատ | 700 |
| 104 | Պտտվող լուսարձակի փոխարինում | հատ | 700 |
| 105 | Պտտվող լուսարձակի բարձակի փոխարինում | հատ | 700 |
| 106 | Ջեռուցիչի էլետրոշարժիչի փոխարինում | հատ | 2500 |
| 107 | Ամբողջ էլեկտրոլարերի փոխարինում | հատ | 60000 |
| 108 | Սարքերի վահանի փոխարինում | հատ | 8000 |
| 109 | Ցուցիչի փոխարինում | հատ | 700 |
| 110 | Անջատիչների վահանակի փոխարինում | հատ | 6000 |
| 111 | Անջատիչի փոխարինում | հատ | 700 |
| 112 | Խցիկի հանում և տեղադրում | հատ | 35000 |
| 113 | Խցիկի քանդում, մաքրում, վերանորոգում և ներկում | հատ | 85000 |
| 114 | Խցիկի ներսի երեսաքաշում | հատ | 30000 |
| 115 | Ապակու կիպարարի փոխարինում | հատ | 2500 |
| 116 | Ապակու փոխարինում | հատ | 2500 |
| 117 | Ընդհանուր յուղում (смазка) | հատ | 15000 |
| 118 | Յուղման պտուկի փոխարինում | հատ | 100 |
| 119 | CO-զոդում | սմ | 300 |
| 120 | Զոդում | սմ | 200 |
| 121 | Գազաեռակցումային կտրում | սմ | 200 |
| 122 | Խառատային ծառայություն /1 կտոր/ | հատ | 500 |
| 123 | Մասնագետի ծառայություն | մ/ժամ | 6000 |
| 124 | Ղեկային մեխանիզմի ապամոնտաժում | հատ | 15000 |
| 125 | Ղեկային մեխանիզմի քանդում և արատավորում | հատ | 10000 |
| 126 | Ղեկայինի մեխանիզմի մաքրում և ներկում | հատ | 10000 |
| 127 | Ղեկային մեխանիզմի հավաքում | հատ | 10000 |
| 128 | Արգելակման ժապավենի ապամոնտաժում | հատ | 6000 |
| 129 | Արգելակման ժապավենի քանդում | հատ | 4000 |
| 130 | Արգելակման ժապավենի մակադրակների փոխարինում | հատ | 7000 |
| 131 | Արգելակման ժապավենի տեղադրում | հատ | 6000 |
| 132 | Տուրբոկոմպրեսորի ապամոնտաժում | հատ | 5000 |
| 133 | Տուրբոկոմպրեսորի փոխարինում, տեղադրում | հատ | 8000 |
| 134 | Պաշտպանիչ պատյանի ապամոնտաժում | հատ | 10000 |
| 135 | Պաշտպանիչ պատյանի վերանորոգում | հատ | 4000 |
| 136 | Պաշտպանիչ պատյանի մաքրում և ներկում | հատ | 12000 |
| 137 | Պաշտպանիչ պատյանի տեղադրում | հատ | 10000 |
| 138 | Անիվի ապամոնտաժում | հատ | 3000 |
| 139 | Անիվի տեղադրում | հատ | 3000 |
| 140 | Հիդրոբաքի ապամոնտաժում | հատ | 6000 |

| | | | |
|---|---|---|---|
| 141 | Հիդրոբաքի վերանորոգում | հատ | 9000 |
| 142 | Հիդրոբաքի մաքրում և ներկում | հատ | 5000 |
| 143 | Հիդրոբաքի քանդում և արատավորում | հատ | 4000 |
| 144 | Հիդրոբաքի տեղադրում | հատ | 6000 |
| 145 | Հիդրոհամակարգի զտիչների փոխարինում | հատ | 1000 |
| 146 | Հիդրոնասոսի ապամոնտաժում | հատ | 4000 |
| 147 | Հիդրոնասոսի տեղադրում | հատ | 4000 |
| 148 | Հիդրոնասոսի վերանորոգում | հատ | 8000 |
| 149 | Հիդրոբաշխիչի ապամոնտաժում | հատ | 8000 |
| 150 | Հիդրոբաշխիչի քանդում և արատավորում | հատ | 6000 |
| 151 | Հիդրոբաշխիչի վերանորոգում | հատ | 8000 |
| 152 | Հիդրոբաշխիչի դետալների մաքրում և ներկում | հատ | 1500 |
| 153 | Հիդրոբաշխիչի հավաքում | հատ | 6000 |
| 154 | Հիդրոբաշխիչի տեղադրում | հատ | 8000 |
| 155 | Հիդրոբաշխիչի լծակների ապամոնտաժում | հատ | 300 |
| 156 | Հիդրոբաշխիչի լծակների վերանորոգում | հատ | 500 |
| 157 | Հիդրոբաշխիչի լծակների տեղադրում | հատ | 300 |
| 158 | Հարթաշերեփի ապամոնտաժում | հատ | 15000 |
| 159 | Հարթաշերեփի թևի ապամոնտաժում | հատ | 6000 |
| 160 | Հարթաշերեփի վերանորոգում | հատ | 35000 |
| 161 | Հարթաշերեփի դանակի փոխարինում | հատ | 8000 |
| 162 | Հարթաշերեփի մաքրում և ներկում | հատ | 12000 |
| 163 | Հարթաշերեփի բարձրացնող կամ թեքող գլանի ապամոնտաժում | հատ | 5000 |
| 164 | Հարթաշերեփի բարձրացնող կամ թեքող գլանի վերանորոգում | հատ | 8000 |
| 165 | Հարթաշերեփի բարձրացնող կամ թեքող գլանի տեղադրում | հատ | 5000 |
| 166 | Հարթաշերեփի տեղադրում | հատ | 12000 |
| 167 | Հարթաշերեփի թևերի տեղադրում | հատ | 6000 |
| 168 | Փխրեցուցիչի ապամոնտաժում, մոնտաժում | հատ | 10000 |
| 169 | Փխրեցուցիչի վերանորոգում | հատ | 8000 |
| 170 | Շրջադարձային օղակի քանդում | հատ | 12000 |
| 171 | Շրջադարձային օղակի վերանորոգում | հատ | 12000 |
| 172 | Շրջադարձային օղակի հավաքում | հատ | 10000 |
| 173 | Պտտվող հարթաշերեփի ռեդուկտորի ապամոնտաժում, մոնտաժում | հատ | 8000 |
| 174 | Պտտվող հարթաշերեփի ռեդուկտորի քանդում | հատ | 8000 |
| 175 | Պտտվող հարթաշերեփի ռեդուկտորի վերանորոգում | հատ | 8000 |
| 176 | Պտտվող հարթաշերեփի ռեդուկտորի հավաքում | հատ | 8000 |
| 177 | Դիմացի կամրջակի ապամոնտաժում | հատ | 16000 |
| 178 | Դիմացի կամրջակի մոնտաժում | հատ | 16000 |
| 179 | Դիմացի կամրջակի քանդում և արատավորում | հատ | 15000 |
| 180 | Դիմացի կամրջակի հավաքում | հատ | 15000 |
| 181 | Դիմացի կամրջակի ռեդուկտորի ապամոնտաժում | հատ | 5000 |
| 182 | Դիմացի կամրջակի ռեդուկտորի մոնտաժում | հատ | 5000 |
| 183 | Դիմացի կամրջակի ռեդուկտորի քանդում և արատավորում | հատ | 5000 |
| 184 | Դիմացի կամրջակի ռեդուկտորի վերանորոգում | հատ | 5000 |
| 185 | Դիմացի կամրջակի ռեդուկտորի հավաքում | հատ | 5000 |
| 186 | Միջին կամրջակի ապամոնտաժում | հատ | 16000 |

| | | | |
|---|---|---|---|
| 187 | Միջին կամրջակի մոնտաժում | հատ | 16000 |
| 188 | Միջինկամրջակի քանդում և արատավորում | հատ | 15000 |
| 189 | Միջին կամրջակի հավաքում | հատ | 15000 |
| 190 | Միջին կամրջակի ռեդուկտորի ապամոնտաժում | հատ | 5000 |
| 191 | Միջին կամրջակի ռեդուկտորի մոնտաժում | հատ | 5000 |
| 192 | Միջին կամրջակի ռեդուկտորի քանդում և արատավորում | հատ | 5000 |
| 193 | Միջին կամրջակի ռեդուկտորի վերանորոգում | հատ | 5000 |
| 194 | Միջին կամրջակի ռեդուկտորի  հավաքում | հատ | 5000 |
| 195 | Հետևի կամրջակի ապամոնտաժում | հատ | 16000 |
| 196 | Հետևի կամրջակի մոնտաժում | հատ | 16000 |
| 197 | Հետևի կամրջակի քանդում և արատավորում | հատ | 15000 |
| 198 | Հետևի կամրջակի հավաքում | հատ | 15000 |
| 199 | Հետևի կամրջակի ռեդուկտորի ապամոնտաժում | հատ | 5000 |
| 200 | Հետևի կամրջակի ռեդուկտորի մոնտաժում | հատ | 5000 |
| 201 | Հետևի կամրջակի ռեդուկտորի քանդում և արատավորում | հատ | 5000 |
| 202 | Հետևի կամրջակի ռեդուկտորի  վերանորոգում | հատ | 5000 |
| 203 | Հետևի կամրջակի ռեդուկտորի  հավաքում | հատ | 5000 |
| 204 | Ամրաշրջանակի վերանորոգում | հատ | 45000 |
| 205 | Ընթացքային մասի փորձարկումներ | հատ | 50000 |

**Նորոգման ընթացքում օգտագործվող պահեստամասերի կոդերը և նյութերի անվանումները**

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Պ/մաս | BF04M1013EC | լրակազմ | 7000000 |
| 2 | Պ/մաս | ЯМЗ-236 | լրակազմ | 6500000 |
| 3 | Պ/մաս | 236-1002012- А5 | լրակազմ | 2110000 |
| 4 | Պ/մաս | 236-1002265-А | հատ | 5000 |
| 5 | Պ/մաս | 201-1005 034-Б4 | հատ | 2500 |
| 6 | Պ/մաս | 236-1002260-Б2 | հատ | 140000 |
| 7 | Պ/մաս | 236-1002266-А | հատ | 3500 |
| 8 | Պ/մաս | 236-1002258-А2 | հատ | 1000 |
| 9 | Պ/մաս | 236-1002255-В3 | հատ | 32000 |
| 10 | Պ/մաս | 236-1005160-А3 | հատ | 35000 |
| 11 | Պ/մաս | 236-1002318 | հատ | 13000 |
| 12 | Պ/մաս | 236-1003210-В3 | հատ | 6000 |
| 13 | Պ/մաս | 236-1003270 | հատ | 3500 |
| 14 | Պ/մաս | 236-1003260-Б | լրակազմ | 42000 |
| 15 | Պ/մաս | 204А-1003278 | հատ | 5000 |
| 16 | Պ/մաս | 236-1003261-Б | հատ | 1500 |
| 17 | Պ/մաս | 201-1114065-А2 | հատ | 3000 |
| 18 | Պ/մաս | 236-1003013-Е | լրակազմ | 650000 |
| 19 | Պ/մաս | 236-1005061-Б | հատ | 58000 |
| 20 | Պ/մաս | 236-1005009-Д | հատ | 1450000 |
| 21 | Պ/մաս | 236-1004058-В | լրակազմ | 35000 |
| 22 | Պ/մաս | 236-1005183-Д | լրակազմ | 7000 |
| 23 | Պ/մաս | 236-1005115-Ж | հատ | 475000 |
| 24 | Պ/մաս | 236-1005125-А2 | հատ | 145000 |
| 25 | Պ/մաս | 236-1005030 | հատ | 45000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 26 | Պ/մաս | 236-1006015-Г2 | հատ | 120000 |
| 27 | Պ/մաս | 236-1006214-Г2 | հատ | 28000 |
| 28 | Պ/մաս | 236-1029116 | հատ | 28000 |
| 29 | Պ/մաս | 236-1011014-В3 | լրակազմ | 145000 |
| 30 | Պ/մաս | 33.1111102 | հատ | 7000 |
| 31 | Պ/մաս | 33.1111282 | հատ | 4000 |
| 32 | Պ/մաս | 33.1111290 | հատ | 7000 |
| 33 | Պ/մաս | 236-1111186-А3 | հատ | 1000 |
| 34 | Պ/մաս | 60.1111074-01 | հատ | 10000 |
| 35 | Պ/մաս | 236-1111040 | հատ | 3000 |
| 36 | Պ/մաս | 236-1111060 | հատ | 8000 |
| 37 | Պ/մաս | 236-1111062 | հատ | 4000 |
| 38 | Պ/մաս | 60.1111172-10 | հատ | 22000 |
| 39 | Պ/մաս | 7204A | հատ | 4000 |
| 40 | Պ/մաս | 236-1002023 | հատ | 2500 |
| 41 | Պ/մաս | 236-1002024-А | հատ | 1000 |
| 42 | Պ/մաս | 236-1002040 | հատ | 1000 |
| 43 | Պ/մաս | 236-1002021-А | հատ | 22000 |
| 44 | Պ/մաս | 236-1004020 | հատ | 7000 |
| 45 | Պ/մաս | 236-1004015-Д | հատ | 23000 |
| 46 | Պ/մաս | 236-1004006 | լրակազմ | 51000 |
| 47 | Պ/մաս | 236-1000106-Б3 | հատ | 8000 |
| 48 | Պ/մաս | 236-1112110-Б2 | հատ | 5000 |
| 49 | Պ/մաս | 26.1112010 | լրակազմ | 30000 |
| 50 | Պ/մաս | 236-1307010-А2 | լրակազմ | 115000 |
| 51 | Պ/մաս | 236-1307170 | հատ | 4000 |
| 52 | Պ/մաս | 236-1307029-А | լրակազմ | 28000 |
| 53 | Պ/մաս | А122Б-2.10.00.014 | հատ | 16000 |
| 54 | Պ/մաս | Д3-298-1.44.60.000 | հատ | 15000 |
| 55 | Պ/մաս | А122Б-2.10.00.200 | հատ | 15000 |
| 56 | Պ/մաս | А122Б-2.10.02.000 | լրակազմ | 380000 |
| 57 | Պ/մաս | 22062-18.02-01 | հատ | 8000 |
| 58 | Պ/մաս | А122Б-2.10.00.005 | հատ | 5000 |
| 59 | Պ/մաս | А122Б-2.10.02.050 | հատ | 12000 |
| 60 | Պ/մաս | А122Б-2.10.02.070 | հատ | 12000 |
| 61 | Պ/մաս | А122Б-2.10.00.009 | հատ | 6000 |
| 62 | Պ/մաս | А122Б-2.10.00.018 | հատ | 6000 |
| 63 | Պ/մաս | 800-1205015 | հատ | 22000 |
| 64 | Պ/մաս | А122Б-2.10.00.100 | հատ | 18000 |
| 65 | Պ/մաս | А122Б-2.10.06.050 | հատ | 4000 |
| 66 | Պ/մաս | А122Б-2.10.06.010 | հատ | 5000 |
| 67 | Պ/մաս | А122Б-2.10.06.040 | հատ | 5000 |
| 68 | Պ/մաս | А122Б-1.10.00.020 | հատ | 5000 |
| 69 | Պ/մաս | 13.9HR24651 | լրակազմ | 1950000 |
| 70 | Պ/մաս | А122Б-2.10.00.001 | հատ | 4000 |
| 71 | Պ/մաս | А122Б-2.10.09.001 | հատ | 1000 |
| 72 | Պ/մաս | Д3-122Б-1.99.00.302 | հատ | 1000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 73 | Պ/մաս | ОДМ260-2201010 | լրակազմ | 65000 |
| 74 | Պ/մաս | 557.05.16.000 | հատ | 13000 |
| 75 | Պ/մաս | А122Б-2.10.00.016 | հատ | 8000 |
| 76 | Պ/մաս | ДЗ-298-1.44.60.000 | հատ | 7000 |
| 77 | Պ/մաս | А122Б-2.10.00.013 | հատ | 11000 |
| 78 | Պ/մաս | А122Б-2.10.00.016 | հատ | 6000 |
| 79 | Պ/մաս | А122Б-2.10.00.017 | հատ | 12000 |
| 80 | Պ/մաս | А122Б-2.10.02.060 | հատ | 8000 |
| 81 | Պ/մաս | Б100.10.04.030 | լրակազմ | 35000 |
| 82 | Պ/մաս | ЭФВ.721.110.95.60-10 | հատ | 15000 |
| 83 | Պ/մաս | 101.05.00.360 | հատ | 12000 |
| 84 | Պ/մաս | 5337-1109024 | հատ | 8000 |
| 85 | Պ/մաս | ИЗВ-700 | հատ | 9000 |
| 86 | Պ/մաս | Кат.№ 3037625 | հատ | 5000 |
| 87 | Պ/մաս | А122Б-2.10.07.010 | հատ | 7000 |
| 88 | Պ/մաս | А122Б-2.10.07.030 | հատ | 7000 |
| 89 | Պ/մաս | А122Б-2.10.07.020 | հատ | 9000 |
| 90 | Պ/մաս | А122Б-2.10.00.011 | հատ | 6000 |
| 91 | Պ/մաս | 557.10.13.005 | հատ | 7000 |
| 92 | Պ/մաս | 557.10.13.002 | հատ | 2000 |
| 93 | Պ/մաս | 4501353 | հատ | 100000 |
| 94 | Պ/մաս | 4501339 | լրակազմ | 95000 |
| 95 | Պ/մաս | 4253772 | հատ | 70000 |
| 96 | Պ/մաս | 4201564 | հատ | 35000 |
| 97 | Պ/մաս | King CR 1635CP | լրակազմ | 15000 |
| 98 | Պ/մաս | 1005081-52D | լրակազմ | 15000 |
| 99 | Պ/մաս | 2931278 | լրակազմ | 150000 |
| 100 | Պ/մաս | 1182002 | հատ | 7000 |
| 101 | Պ/մաս | 4283299 | հատ | 3000 |
| 102 | Պ/մաս | 04256820KZ/3802131/20405586 | հատ | 590000 |
| 103 | Պ/մաս | 4251110 | հատ | 1000000 |
| 104 | Պ/մաս | 02112957 Deutz | հատ | 75000 |
| 105 | Պ/մաս | 4213839 | հատ | 22000 |
| 106 | Պ/մաս | 4215774 | հատ | 33000 |
| 107 | Պ/մաս | 1182264 | հատ | 31000 |
| 108 | Պ/մաս | 1182315 | հատ | 155000 |
| 109 | Պ/մաս | 4199447 | հատ | 42000 |
| 110 | Պ/մաս | FC 04255259 | հատ | 980000 |
| 111 | Պ/մաս | А122Б-2.10.02.001 | հատ | 8000 |
| 112 | Պ/մաս | КМ 040-00-80.06.100 | հատ | 12000 |
| 113 | Պ/մաս | РВ-ОНВ ЕК-14-03 | հատ | 300000 |
| 114 | Պ/մաս | А122Б-2.10.02.005 | հատ | 8000 |
| 115 | Պ/մաս | А122Б-2.10.02.004 | հատ | 8000 |
| 116 | Պ/մաս | А122Б-2.10.02.002 | հատ | 12000 |
| 117 | Պ/մաս | А122Б-2.10.02.003 | հատ | 12000 |
| 118 | Պ/մաս | А122Б-2.10.02.020 | հատ | 10000 |
| 119 | Պ/մաս | 22062-11.52 | հատ | 2000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 120 | Պ/մաս | А122Б-2.10.02.020-01 | հատ | 8000 |
| 121 | Պ/մաս | А122Б-2.10.03.002 | հատ | 1000 |
| 122 | Պ/մաս | А122Б-2.10.03.005 | հատ | 6000 |
| 123 | Պ/մաս | А122Б-2.10.03.004 | հատ | 5000 |
| 124 | Պ/մաս | Д3-298-1.31.00.010 | հատ | 4000 |
| 125 | Պ/մաս | А122Б-2.10.03.003 | հատ | 5000 |
| 126 | Պ/մաս | А122Б-2.10.03.001 | հատ | 1000 |
| 127 | Պ/մաս | ДУ-15 11Б6бк | հատ | 3000 |
| 128 | Պ/մաս | 021131151 կամ FS19737 | հատ | 8000 |
| 129 | Պ/մաս | 021131151 կամ FF5074 | հատ | 8000 |
| 130 | Պ/մաս | 021131151 կամ LF 4054 | հատ | 9000 |
| 131 | Պ/մաս | 1180597 | հատ | 6000 |
| 132 | Պ/մաս | 1181749 | հատ | 8000 |
| 133 | Պ/մաս | 414401105 | հատ | 75000 |
| 134 | Պ/մաս | VDIN2SN-frost-20-215-2200 DKO-L(Г)30x2/22 DKO-L (Г) 30x2/22/90VDIN2SN-frost-20-215-2200 | հատ | 22000 |
| 135 | Պ/մաս | VDIN2SN-frost-20-215-1800 DKO-L(Г)30x2/22 DKO-L (Г) 30x2/22/90 | հատ | 22000 |
| 136 | Պ/մաս | КМ 040-00-80.06.100 | հատ | 20000 |
| 137 | Պ/մաս | 247052 կամ HF 28857 | հատ | 9000 |
| 138 | Պ/մաս | Д3-122.01.00.007 | հատ | 25000 |
| 139 | Պ/մաս | Д3-122А.01.04.005 | հատ | 5000 |
| 140 | Պ/մաս | Д3-122А-1.11.00.004 | հատ | 4000 |
| 141 | Պ/մաս | Д3-122А-1.11.00.001 | հատ | 45000 |
| 142 | Պ/մաս | Д3-122А.01.04.004 | հատ | 45000 |
| 143 | Պ/մաս | Д3-122А.01.01.020 | կոմպլեկտ | 850000 |
| 144 | Պ/մաս | А122Б-2.41.01.010 | կոմպլեկտ | 1450000 |
| 145 | Պ/մաս | ЦГ-50.30x265.13-01 | հատ | 360000 |
| 146 | Պ/մաս | ЦГ-50.30x265.13 | հատ | 360000 |
| 147 | Պ/մաս | Д3-122Б.03.09.100 | հատ | 42000 |
| 148 | Պ/մաս | Д3-122А.03.03.000-01 | հատ | 250000 |
| 149 | Պ/մաս | Д3-122А.03.02.000 | հատ | 80000 |
| 150 | Պ/մաս | Д3-122А.03.00.004 | հատ | 9000 |
| 151 | Պ/մաս | Д3-122А.03.06.000 | հատ | 45000 |
| 152 | Պ/մաս | ЦГ-2-100.50x140.01 | հատ | 260000 |
| 153 | Պ/մաս | Д3-122А.03.00.003 | հատ | 55000 |
| 154 | Պ/մաս | Д3-112А.03.00.011 | հատ | 6000 |
| 155 | Պ/մաս | Д3-122А.03.00.005 | հատ | 13000 |
| 156 | Պ/մաս | Д3-122А.03.00.002 | հատ | 25000 |
| 157 | Պ/մաս | Д144-24-018 | հատ | 5000 |
| 158 | Պ/մաս | 557-1.03.00.003 | հատ | 7000 |
| 159 | Պ/մաս | Д3-122А.03.03.000 | հատ | 250000 |
| 160 | Պ/մաս | Д3-122А.03.03.010-01 | հատ | 70000 |
| 161 | Պ/մաս | 8752.2.2-90x120-2 | հատ | 5000 |
| 162 | Պ/մաս | Д144-25-029 | հատ | 9000 |
| 163 | Պ/մաս | 333,7613 | հատ | 12000 |
| 164 | Պ/մաս | Д144-75-1 | հատ | 120000 |
| 165 | Պ/մաս | 333,761 | հատ | 9000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 166 | Պ/մաս | ДЗ-122А.03.02.000-01 | հատ | 15000 |
| 167 | Պ/մաս | ДЗ-122Б.03.07.000 | լրակազմ | 224000 |
| 168 | Պ/մաս | ДЗ-122.03.07.001 | հատ | 52000 |
| 169 | Պ/մաս | ДЗ-122А.03.00.00.001 | հատ | 18000 |
| 170 | Պ/մաս | ДЗ-122Б.03.09.000 | հատ | 25000 |
| 171 | Պ/մաս | 22062-7.01 | հատ | 6000 |
| 172 | Պ/մաս | ДЗ-122А.03.02.001-01 | հատ | 45000 |
| 173 | Պ/մաս | TAP5501.102 (E) | լրակազմ | 1450000 |
| 174 | Պ/մաս | ЦГ-100.50x560.31 | հատ | 330000 |
| 175 | Պ/մաս | 3SPA33+2SPA11DSAE B-14G | լրակազմ | 270000 |
| 176 | Պ/մաս | А122Б-1.08.01.250-02 | հատ | 80000 |
| 177 | Պ/մաս | А122Б-1.08.01.260-02 | հատ | 6000 |
| 178 | Պ/մաս | MDM 101 BCD183/D1 | հատ | 8000 |
| 179 | Պ/մաս | DM101CD1 | հատ | 5000 |
| 180 | Պ/մաս | 201052 | հատ | 7000 |
| 181 | Պ/մաս | 161539/F | հատ | 12000 |
| 182 | Պ/մաս | OH 125/1-125 | հատ | 120000 |
| 183 | Պ/մաս | MO 15733 | հատ | 140000 |
| 184 | Պ/մաս | AMF 306061 ECV1BB | հատ | 10000 |
| 185 | Պ/մաս | CA301ECV1 | հատ | 6000 |
| 186 | Պ/մաս | ДЗ-122Б-7.79.01.010 | լրակազմ | 210000 |
| 187 | Պ/մաս | ДЗ-122Б-7.79.01.020 | լրակազմ | 210000 |
| 188 | Պ/մաս | VGM 09/6 | հատ | 210000 |
| 189 | Պ/մաս | VGM 09/5 | հատ | 210000 |
| 190 | Պ/մաս | 05.53.03-10-03-01 | հատ | 18000 |
| 191 | Պ/մաս | ЦГ-100.50x1250.48 | հատ | 420000 |
| 192 | Պ/մաս | 05.53.03-10-03-01 | հատ | 18000 |
| 193 | Պ/մաս | ЦГ-125.56x450.11 | հատ | 350000 |
| 194 | Պ/մաս | ДЗ-122А.08.30.000 | հատ | 65000 |
| 195 | Պ/մաս | ЦГ-100.50x1600.73 | հատ | 320000 |
| 196 | Պ/մաս | ЦГ-100.50x1250.48-01 | հատ | 300000 |
| 197 | Պ/մաս | ЦГ-100.50x200.70 | հատ | 280000 |
| 198 | Պ/մաս | ЦГ-50.30x50.65 | հատ | 250000 |
| 199 | Պ/մաս | ДЗ-122.02.10.000 | լրակազմ | 1250000 |
| 200 | Պ/մաս | ДЗ-122А.02.10.001-04 | հատ | 700 |
| 201 | Պ/մաս | ДЗ-122А.02.10.002 | հատ | 55000 |
| 202 | Պ/մաս | ДЗ-122А.02.09.004-01 | հատ | 45000 |
| 203 | Պ/մաս | 15523. M16x1,5 | հատ | 300 |
| 204 | Պ/մաս | ДЗ-122А.02.09.002-01 | հատ | 45000 |
| 205 | Պ/մաս | ДЗ-122А.02.10.001-01 | հատ | 700 |
| 206 | Պ/մաս | ДЗ-122А.02.10.001-02 | հատ | 700 |
| 207 | Պ/մաս | 557.02.00.006 | հատ | 15000 |
| 208 | Պ/մաս | ДЗ-122А-1.22.02.000-01 | հատ | 180000 |
| 209 | Պ/մաս | ДЗ-122А.02.03.002-01 | հատ | 12000 |
| 210 | Պ/մաս | ДЗ-122Б.02.02.001 | հատ | 65000 |
| 211 | Պ/մաս | ДЗ-122А.02.03.002 | հատ | 12000 |
| 212 | Պ/մաս | ДЗ-122А-1.22.02.010-01 | հատ | 70000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 213 | Պ/մաս | ДЗ-122Б.02.15.000-01 | հատ | 450000 |
| 214 | Պ/մաս | ДЗ-122Б.02.00.002 | հատ | 8000 |
| 215 | Պ/մաս | 557.02.00.004 | հատ | 7000 |
| 216 | Պ/մաս | ДЗ-122.02.00.006 | հատ | 25000 |
| 217 | Պ/մաս | 557.02.00.007 | հատ | 6000 |
| 218 | Պ/մաս | ДЗ-122Б.02.00.001 | հատ | 8000 |
| 219 | Պ/մաս | ДЗ-122Б.02.06.000 | հատ | 170000 |
| 220 | Պ/մաս | 557-1.08.56.010-01 | հատ | 245000 |
| 221 | Պ/մաս | 557.08.56.004 | հատ | 6000 |
| 222 | Պ/մաս | 557.08.56.005 | հատ | 6000 |
| 223 | Պ/մաս | 557.08.56.007 | հատ | 1000 |
| 224 | Պ/մաս | ДЗ-122.08.60.001 | հատ | 21000 |
| 225 | Պ/մաս | ДЗ-122.08.60.004 | հատ | 5000 |
| 226 | Պ/մաս | 333,7611 | հատ | 7000 |
| 227 | Պ/մաս | ДЗ-122.08.60.007 | հատ | 15000 |
| 228 | Պ/մաս | ДЗ-122.08.60.002 | հատ | 4000 |
| 229 | Պ/մաս | ДЗ-122.08.60.005 | հատ | 12000 |
| 230 | Պ/մաս | 22062-15.01 | հատ | 6000 |
| 231 | Պ/մաս | ДЗ-122.08.60.023 | հատ | 1500 |
| 232 | Պ/մաս | ДЗ-122.08.60.009 | հատ | 10000 |
| 233 | Պ/մաս | ДЗ-122.08.60.034 | հատ | 6000 |
| 234 | Պ/մաս | ДЗ-122.08.60.006 | հատ | 32000 |
| 235 | Պ/մաս | ДЗ-122.08.60.008 | հատ | 7000 |
| 236 | Պ/մաս | 8752.1.2-65x90-2 | հատ | 2000 |
| 237 | Պ/մաս | 8338,312 | հատ | 8000 |
| 238 | Պ/մաս | ДЗ-122Б.02.06.001 | հատ | 140000 |
| 239 | Պ/մաս | ДЗ-122.08.60.003 | հատ | 30000 |
| 240 | Պ/մաս | ДЗ-122Б.30.00.000-01 | լրակազմ | 1200000 |
| 241 | Պ/մաս | ДЗ-122Б.30.03.000 | հատ | 230000 |
| 242 | Պ/մաս | У62.10.04.30.01.001-03 | հատ | 62000 |
| 243 | Պ/մաս | ДЗ-122А.02.10.001-03 | հատ | 700 |
| 244 | Պ/մաս | 5915.М16 | հատ | 300 |
| 245 | Պ/մաս | ДЗ-122Б.19.02.000 | հատ | 380000 |
| 246 | Պ/մաս | ДЗ-122Б.19.01.000 | հատ | 65000 |
| 247 | Պ/մաս | 05.483.000 | հատ | 25000 |
| 248 | Պ/մաս | 05.479.000 | հատ | 25000 |
| 249 | Պ/մաս | ФП116-В | հատ | 13000 |
| 250 | Պ/մաս | 171.3746-03 | հատ | 13000 |
| 251 | Պ/մաս | 8724.304/014 | հատ | 13000 |
| 252 | Պ/մաս | ноя.29 | հատ | 6000 |
| 253 | Պ/մաս | 16.3829 | հատ | 6000 |
| 254 | Պ/մաս | ММ355 | հատ | 6000 |
| 255 | Պ/մաս | 2602.3829 | հատ | 6000 |
| 256 | Պ/մաս | ТМ111 | հատ | 6000 |
| 257 | Պ/մաս | ТМ100В | հատ | 6000 |
| 258 | Պ/մաս | PA66-GF35 | հատ | 7000 |
| 259 | Պ/մաս | ноя.22 | հատ | 22000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 260 | Պ/մաս | 2101-07 | հատ | 4000 |
| 261 | Պ/մաս | ГС-1803-33.30.100 | հատ | 85000 |
| 262 | Պ/մաս | ГС-1803-33.30.100-01 | հատ | 85000 |
| 263 | Պ/մաս | ГС-1803.33.30.001 | հատ | 11000 |
| 264 | Պ/մաս | ВРЕИ.103621.020 | հատ | 9000 |
| 265 | Պ/մաս | ГС-1803.33.10.011 | հատ | 17000 |
| 266 | Պ/մաս | Д3-298.33.10.009 | հատ | 17000 |
| 267 | Պ/մաս | ГС-1803.33.10.057 | հատ | 17000 |
| 268 | Պ/մաս | F2001C/SM80xBr | հատ | 65000 |
| 269 | Պ/մաս | PF-003 | հատ | 25000 |
| 270 | Պ/մաս | PF-0012 | հատ | 95000 |
| 271 | Պ/մաս | PF-004 | հատ | 105000 |
| 272 | Պ/մաս | Д3-122Б-7.64.00.000 | հատ | 55000 |
| 273 | Պ/մաս | Д3-122Б-7.64.00.000-01 | հատ | 55000 |
| 274 | | Մածիկ | կգ | 2500 |
| 275 | | Նախաներկ | կգ | 3300 |
| 276 | | Պղնձե խողովակ | մ | 2400 |
| 277 | | Ֆաներա 0,6մմ | ք.մ | 1500 |
| 278 | | Ֆաներա 1,0մմ | ք.մ | 1900 |
| 279 | | Ֆաներա 1,2մմ | ք.մ | 2200 |
| 280 | | Ֆաներա 1,5մմ | ք.մ | 2500 |
| 281 | | Պարոնիտ | կգ | 4300 |
| 282 | | Շարժիչի յուղ Մ10ԴՄ կամ համարժեք | լիտր | 2200 |
| 283 | | Տրանսմիսիոն յուղ TM-5 SAE 80W-90 կամ համարժեք /լիտր/ | լիտր | 1800 |
| 284 | | Հիդրավլիկ յուղ կամ համարժեք | լիտր | 2000 |
| 285 | | Հովացման համակարգի հեղուկ նվազագույնը - 40 | լիտր | 1400 |
| 286 | | Քսայուղ LITOL 24 կամ համարժեք | կգ | 4500 |
| 287 | | Ցելյուլոզային ներկ | լիտր | 1800 |
| 288 | | Սինթետիկ ներկ vika կամ համարժեք | լիտր | 4500 |
| 289 | | Լուծիչ | լիտր | 1100 |
| 290 | | Մետաղական թիթեղ | կգ | 470 |
| 291 | | ԴՎՊ | ք.մ | 1130 |
| 292 | | Կաշի արհեստական | ք.մ | 3400 |
| 293 | | Գուպկա (սպունգ) | ք.մ | 3300 |
| 294 | | Լինոլում | ք.մ | 1900 |
| 295 | | Էլեկտրոդ | կգ | 950 |

**Ծանոթություն՝** - Ծառայությունների մատուցումը իրականացվելու է ըստ ՀՀ ԶՈՒ ԻԶՎ կողմից ներկայացված հայտերի, առավելագույն գումարը չի կարող գերազանցել **24 000 000** (քսանչորս միլիոն) ՀՀ դրամը:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈՒԼՀՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Սլայք» ՓԲԸ գլխավոր տնօրեն

Մ. ԱՀԱՐՈՆՅԱՆ

*Հավելված N 3*
*N ԳՀԾՁԲ-21-20/2-2 պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| hh ______________________ | hh______________________ |
| hվhh ____________________ | hվhh____________________ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*« » « » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունը ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված N 3.1*
*N ԳՀԾՁԲ-21-20/2-2 պայմանագրի*

ԱԿՏ N __
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________________ -ի
Պատվիրատուի անվանումը Կատարողի անվանումը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ________________________ -ին կնքված N ________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

________________________
ազգանուն, անուն

________________________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________________
ազգանուն, անուն

________________________
ստորագրություն